# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
# ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐ

N 196 16.01.2026թ.

## ՈՐՈՇՈՒՄ

### ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված՝ «ԷՍ ԵՎ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (պայմանագրի կողմին), ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի ծածկագիրը | Պայմանագրի | | | | | Պայմանագրի կողմի /մատակարար, կատարող, կապալառու/ | | | Պատվիրատուի անվանումը | Պայմանագիրը լուծելու վերաբերյալ ծանուցումը հրապարակելու ամսաթիվը | Իրավական հիմքը | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ծածկագիրը | չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/ | չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/ | անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-8/30 | ԳՀԱՊՁԲ-25-8/30-1 | 1 | դյուրակիր համակարգիչներ | 35 880 000 | 30 000 000 | «ԷՍ ԵՎ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 01360111 | ՀՀ ք. Երևան, Նազարբեկյան 13 | ՀՀ պաշտպանության նախարարություն | 07.01.2026թ. | Հիմք ընդունելով Պայմանագրի 8.14 կետը՝ Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են | Պայմանագրի 8.14 կետով սահմանված՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել և ՀՀ պաշտպանության նախարարություն չի ներկայացրել Պայմանագրի անբաժա |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | երաշխիքով կամ կանխիկ փողով հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է: | նելի մաս հանդիսացող համաձայնագիրը և նախկինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները չեն փոխարինվել բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով: |

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ